

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 30-ին, Աստ-նո ողորմությամբ և Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, հայրենի հողում, հայրենի երկնքի տակ օրհնվեց և օծվեց Վարդենիսի Ս. Աստվածածին եկեղեցու Ս. Սեդանը:

Վաղ առավոտ էր, սակայն եկեղեցին և շրջապատը լեփ-լեցուն էր հավատացյալներով, որոնք ուխտի էին եկել՝ ականատես լինելու հոգեթով և խորհրդավոր օծ-

ման սուրբ արարողությանը: Արարողությանը ներկա էր ոչ միայն տեղի հավատացելոց համայնքը, այլ նաև ուխտավորներ հայ Սփյուռքից:

Սկսվում է սրբազան արարողությունը: Հայ եկեղեցու երեք սրբազան հայրեր՝ Մայր Աթոռի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրուրյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Գարեգին եպիսկոպոս:



Մի պահ Ս. Սեդանի օծման արարողությունից



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՒ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ՏԻԱՐԲ ԵՎ ՏԻԿՆԱՅԲ ՀՈՎԱՆՅԱՆՆԵՐԻ ԵՎ
ՄԱԼԽԱՍՅԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Ներսիսյանը և Կանադայի հայոց թեմի առաջնորդ Ս. Վազգեն եպիսկոպոս Բեշիշյանը, մաղթանքներ, օրհներգություններ և սաղմոսներ են վերստաբում առ Բարձրալույս, ապա կարդացվում է Ս. Ավետարանը: Նախագահող արքեպիսկոպոսը տեսնա-

ազգիս Հայրապետ Ս. Ս. Վազգեն Ա կաթողիկոսին, որ նրա հովանավորության և անվերայ ուշադրությանը վստահված Հայ Եկեղեցին բարգավաճում և վերելք է ապրում: Սրբազան հայրը շնորհակալական խոսք ուղղեց նաև հայրենի և տեղական իշ-



Հոգեհանգստյան արարողության ժամանակ

գրում է Ս. Սեդանը՝ ասելով. «Օրհնեսցի, օծցի և արբեսցի սուրբ միտոնաս և աւուրս շնորհիւ...»: Սրբալույս մեռունը շողշողում է Սուրբ Սեդանի վրա: Աղոթքի բառերը սքանչացնում են հավատացելոց և ոգեպնդում:

Սրբազան արարողության ընթացքում իր շնորհակալության ջերմ խոսքն է ասում Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը. «Հայի ստեղծագործ նկարագրի մասն է եկեղեցաշինությունը, — ասում է սրբազան հայրը, — եկեղեցիները, վանքերը եղել են ոչ միայն աղոթատներ, այլև գիտության, արվեստի և հայրենասիրության օջախներ: Դարերի ընթացքին բազում է եղել մեր նյութական և ոգեղեն կորուստները, սակայն բնավ չի պակասել հաշի հավատքը»: Ապա սրբազան հայրը իր որդիական շնորհակալությունն է հայտնում

խանություններին, որոնք սատարեցին իրագործելու վերաշինությունը Վարդենիսի Ս. Աստվածածին եկեղեցու: Գարեգին սրբազանը մեծարգո բարերարներ տեր և տիկին Մկրտիչ և Ծաքե Մալխասյաններին փոխանցեց Վեհափառ Հայրապետի գնահատանքը և օրհնությունը, նրա ազնիվ հոգու և եկեղեցասեր գործի համար՝ ասելով. «Այսօր թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքում բարգավաճում է մեր ժողովուրդը, կերտում նորանոր հոգևոր-կրոնական, գիտական և մշակութային տաճարներ, սակայն մենք հավատում ենք, որ առավել ամուր են այն կառույցները, որոնց հիմքը մայրենի հողն է, օծված մեր ժողովրդի արյուն-արցունքով, Միածնաէջ Որդու օրհնությամբ: Ահա այս խորին գիտակցությամբ Մկրտիչ Մալխասյանը արժանի ժառանգորդն է մեր նախնյաց լույս հավատքի և շա-

րունակողը նրանց եկեղեցաշեն ոգու և գործի»։ Իր քարոզի ընթացքին սրբազան հայրը անդրադարձավ այն կարևոր հանգամանքին ևս, որ շնորհիվ մեր ազգային պետության գիտության և մշակույթի գործող օջախների այսօր Հայ եկեղեցին հիմնականում զբաղված է հայ հավատացյալի հոգևոր-բարոյական և ազգային-հայրենասիրական ոգու դաստիարակմամբ և կերտմամբ։ Սակայն այլ է վիճակը Սփյուռքի մեր եկեղեցիների։ Հայ եկեղեցին այսօր Սփյուռքում իր ուսերին կրում է ոչ միայն կրոնա-ծիսական պահանջները հաշորդու, այլև Սփյուռքը Մայր Հայաստանի հետ կապող կամուրջ է, մշակութային կարևոր կենտրոն, անփոխարինելի հիմնաքար-օջախ հայապահպանության կարևոր գործի։ Մեր օրերին թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում բարձր է հնչում հայ հոգևորականի, մասնավորապես Ամենայն Հայոց ազգանվեր

Հայրապետի ձայնը. «Վասն խաղաղության ամենայն աշխարհի»։ Խոսքի վերջում սրբազան հայրը աղերս վերադարձեց առ Աստված՝ հալցելով, որ Քրիստոսի սերը սփռվի ամբողջ աշխարհում, որ Աստուծո լույսը լուսավորի համայն մարդկության միտքը և հոգին, որպեսզի անշարժ խաղաղություն լինի, անաստան մնա Հայրենիքն Հայոց և Ս. Էջմիածինը, երկար և արևշատ օրեր ապրի Հայրապետն Հայոց։

«Երանի եկեղեցի շինողաց...»։

ԱՎԵՏԻՍ ՔԱՀԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

*
* *

Սույն թվականի սեպտեմբերի 12-ին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի նախա-



գանությանը տեղի ունեցավ Մրգավանի (Արտաշատի շրջան) Ս. Հակոբ եկեղեցու կենտրոնական գմբեթի խաչի օծման հոգեպարար արարողությունը:

Օծման արքայազան արարողությանը մասնակցում էին Ս. Բարսեղ քհն. Ղազարյանը, Ս. Նորայր քահանա Բաղդասարյանը և Ս. Սարգիս քահանա Տերտերյանը՝ սարկավագաց դասի հետ միասին:

Արգենտինահայ բարերար տիար Էդ-

վարդ Սեֆերյանի նվիրատվությամբ վերանորոգված գմբեթն ու զանգակատունը գեղեցկություն են հաղորդում 1910 թ. գյուղի բնակիչների ջանքերով կառուցված այս եկեղեցուն:

«Յիշատակն արդարոց օրհնութամբ եղիցի»:


ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 22-ին, երեքշաբթի օրը, մարդաշատ էր Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ Մայր եկեղեցին: Այսօր աչտեղ ելույթ էր ունենալու ամերիկահայ

երգչի համար. լրանում էր նրա՝ տարբեր երկրների բեմերում ելույթների 25-ամյակը:

Աշխարհի խաղաղությանն ու ժողովուրդների բարեկամությանը նվիրված հոգևոր



Առաջնորդ արքայազան հայրը և Տիգրան Ժամկոչյանը Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում

երգիչ Տիգրան Ժամկոչյանը, որը վերջերս Սովետական Միություն էր ժամանել Ամերիկայից ու Շվեյցարիայից ժամանած մի խումբ հայ և օտարազգի գրոսաշրջիկների հետ: Սեպտեմբերի 22-ը հոբելյանական էր

երգեցողությունն սկսվեց երեկոյան ժամը 6-ին, հետ երեկոյան ժամերգության: Նախ բարիգալստյան խոսքով հանդես եկավ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերազնորն Ս. Գևորգ եպս. Սերայդարյանը:

«Սիրելի հավատացյալներ,
Աստուծո նորոգությամբ այսօր մարդա-
շատ է մեր ս. եկեղեցին, համախմբված
արտասահմանյան հյուրերով, ուխտավորնե-
րով և տեղի պատվարժան ժողովրդով:

Այսօր Թբիլիսիի Ս. Գևորգ հայոց եկե-
ղեցին, որպես ուխտատեղի, իր հովանու
ներքո է հավաքել երկու աշխարհամասերում
ապրող մարդկանց ներկայացուցիչներին,
որոնք բոլորն էլ տեղում են, որ աշխար-
հում թագավորի խաղաղությունը և ժողո-
վորների բարեկամությունը:

Մեր բազմադարյան Ս. Գևորգ եկեղեցին
ողջունում է ձեր մարդասիրական, աստվա-
ծահաճո այս իդեալը և բոլորիդ մաղթում
բարի գալուստ հյուրընկալ Վրաստանի
ծաղկյալ աշխարհում և մեր ս. եկեղեցում:

Մեր այսօրվա կազմակերպած հանդիսու-
թյան առթիվ ընդունեցեք օրհնաբեր մաղ-
թանքները Ամենայն Հայոց կաթողիկոս
Վազգեն Ա-ի, որը երկու օր առաջ բոլորեց
իր ծննդյան 79, իսկ մեկ շաբաթ հետո՝ գա-
հակալության 32-րդ տարիները: Երկար
կյանք Հայրապետին, երկար օրեր Հայոց
Հոր:

Մենք բոլորս ողջունում ենք ներկայու-
թյունը Վրաց Իլիա Բ Պատրիարք-կաթողի-
կոսի ներկայացուցչին, որն իր հետ է բե-
րել Վրաց Մեծ Պատրիարքի օրհնություն-
ները մեզ բոլորիս:

Ծնորհակալություն ենք հայտնում Վրաս-
տանի կրոնից նախարար պրն. Ցիկլաուրի-
ին, որը իր բարձր հեղինակությամբ հովա-
նավորում է մեր հայոց եկեղեցին՝ նպաս-
տելով նրա ծաղկմանը:

Ծնորհակալություն ձեզ բոլորիդ, սիրելի
հյուրեր, որ ձեր ներկայությամբ պատվեցիք
բազմաշարժար անցյալ ունեցող, անիրա-
վություն և գեղնոցի տեսած, բայց սովետա-
կան Երով մարդկային վերելքին հասած հա-
ժողովրդի եկեղեցին:

Աժմ թույլ տվեք ներկայացնել ամերի-
կահայ երգիչ աղն. Տիգրան Ժամկոչյանին,

Վաշինգտոնից, որը այս տարի, երկրորդ
անգամ լինելով, ինքնահոծար կերպով պի-
տի կատարի հոգևոր-ծիսական երգեցողու-
թյունը՝ նվագակցությամբ Ս. Գևորգ եկեղե-
ցու երգեհոնահարուհի Եկատերինա Մի-
նասյանի:

Տիգրան Ժամկոչյանը Սովետական Միու-
թյուն է ծամանել՝ իր հետ բերելով 31 գրո-
սաշրջիկներ ԱՄՆ-ից, զարգացնելու համար
ժողովուրդների բարեկամությունը և խաղա-
ղության պաշտպանությունը մշակույթի մի-
ջոցով:

Որպես հասարակական գործիչ Տիգրան
Ժամկոչյանը Վաշինգտոնում աշխատում է
նաև որպես ամերիկահայ բարեկամության
հիմնարկի տնօրեն:

Ժամկոչյանը որպես երգիչ մեծ ժողովրդ-
դականություն է վաստակել ԱՄՆ-ում, Եվ-
րոպայում և Միջին Արևելքում: Երգել է մե-
նահամերգներում, օպերայում, ֆեստիվալ-
ներում և որպես մենակատար՝ սիմֆոնիկ
նվագախմբերում, ռադիոհեռուստատեսու-
թյունում: Ջայնագրվել է նաև Երևանի բոլոր
նշանավոր անսամբլների հետ:

Այսպիսով, Ժամկոչյանը իր բացառիկ
արվեստով կատարած դասական, ժողովրդ-
դական և եկեղեցական մեղեդիները ամե-
նուրեք լսելի է դարձրել իր աստվածատուր,
կատարյալ, հնչելու ու զգացական ձայնով:

1981—82 թթ. որպես «Ֆուլբրայտ»-ի ա-
վագ դասախոս, նա լրիվ 8 ամիս Երևանի
Կոմիտասի անվան կոնսերվատորիայում
անցկացրել է երգի մասնագիտացման դա-
սեր:

Հայցում ենք Աստուծո օգնականությունը
Տիգրան Ժամկոչյանի ապագա գործունեու-
թյան մեջ, խաղաղ երկնքի տակ»:

Այնուհետև սկսվեց հոգևոր երգեցողու-
թյունը: Տիգրան Ժամկոչյանը կատարեց հատ-
վածներ Եկմայան ու Կոմիտասի պատա-
րագներից՝ նվագակցությամբ Ս. Գևորգ ե-
կեղեցու դաշնականահարուհի Եկատերինա
Մինասյանի:

ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՒՐԿԱԶԻ ՄԵՋ

Խաչվերացի հրաշափառ տոնին առիթով,
ընդառաջելով Պուրկազի հայ համայնքի
ջերմ խնդրանքին, սեպտեմբերի 8-ին ծո-
վեգերյա քաղաքս այցելեց Ռումանիո և
Պուլկարիո հայոց առաջնորդ գերաշնորհ Ս.
Տիրապ արքեպիսկոպոս Մարտիկյան, բե-
րելով հավատացյալներուս իր օրհնություն-
ները: Կայարան փութացած էին սրբազան


առաջնորդին դիմավորելու Սուրբ Խաչ ե-
կեղեցվույս արժանապատիվ խաչակիր քա-
հանա Ս. Սահակ Մեսրոպովիչը, եկեղեցա-
կան վարչության ատենապետ պրն. Օճնիկ
Պահլենյան, գանձապահ պրն. Սարգիս
Մանուկյան և գաղութիս ազնվասիրտ ան-
ձեր: Ս. Սահակ թարգման հանդիսանալով
ներկաներուն և Պուրկազի հայության ջերմ

և անկեղծ զգացումներում, բարի գալուստ մաղթեց սրբազան հոր: Թեմիս հոգևոր տերը իր ջերմ շնորհակալությունները հայտնելե հետո, անմիջապես կհայտարարեր, թե սրտի անխառն ուրախությամբ և գոհումակությամբ էր, որ քաղաքս կայցեղեր և թե մեծապես կգնահատեր Պուրկազի աշխատունակ և կորույի հայ գաղութը, անոր հայրենասիրական գործը, որով քաղաքիս մեջ Ս. Խաչի նվիրված եկեղեցին վերանորոգեց և կանգուն պահեց:

«Դեռ մեր հիշողության մեջ չ'առ կմնա

Խաչ եկեղեցվո պահպանման համար մեր կատարած ճիգերը, օրհնեց մեզ՝ հայրենի հողին շունչով օծում սրբատաշ քար մը առաքելով, զոր երախտագիտական անհուն հուզումով եկեղեցվույս ավագ դրամ վրա զետեղեցինք՝ ապացուցելու, թե Պուրկազի հայ սրբատունը անբաժանելի մաս կկազմեր Ս. Էջմիածնի սրբալույս հողին, որպեսզի անոր տակեն անցած ատեն հոգվով հայանայինք:

Դեռ 1878 թ. քաղաքս օսմանյան լուծեն ազատագրող ռուս հոչակավոր զորավար



այդ օրերու մեր հոգևոր և ազգային անձախընթաց բռնկումը. «Եռանդ ի սիրտ, հուր ի բազուկ, երգ ի բերան» անմահ Ալիշանի այս խոսքը նշանաբան առնելով լծվեցանք համայնքային գործի, որուն հետևանք, իր տեղն անսասան և պայծառակերտ մնաց մեր հայոց եկեղեցին, դառնալով քաղաքիս ամենահին (չինված 1843 թ.) և ամենագեղեցիկ հուշարձաններեն մին, իսկ քաղաքս այցելող օտար հյուրերու աչքին, գոհար նմուշ մը դարերեն մեզի հասած հայ հոգևոր հարուստ մշակույթին»: Իսկ որքան անսահման եղավ համայնքիս ուրախությունը, երբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ս. Ս. Վազգեն Ա մեր հոգևոր առաջնորդեն լսելով Պուրկազի Ս.

Լերմոնտով իր հաղթանակի գոհաբանական աղոթքը հայ եկեղեցվույս մեջ կատարեց. կաշին այն ատեն քույր համայնքներու պատկանող առավել մեծ ու քարզաված եկեղեցիներ, բայց ռուս զորավարը ծունկի եկավ Պուրկազի հայոց փոքր ու համեստ եկեղեցվույս ամենահաղթ Ս. Խաչի նվիրված խորանին առջև: Այս արարքով մեծ զորավառող ցույց կու տար իր անսահման սերն ու հարգանքը հանդեպ հայ ժողովուրդին, զոր կփափագեր ծամ առաջ ազատագրված տեսնել: Այսօր եկեղեցվույս հյուսիսային որմին վրա ագուցված հուշաքար մը կնվիրականացնե ռուս մեծ զորավարին հայության հանդեպ կատարած վսեմ արարքը, հավերժորեն զմեզ կապելով եղ-

բայրական ոռու ժողովուրդի անվեհեր գավակներում:

Եվ ահա այսօր Ս. Խաչ եկեղեցվո կոչնակը ցնծության դողանքով Քրիստոսի հաղթական տոնը կավետն: Եկեղեցին ու բակը կլեցվի խոտներով հավատացյալներով, «Հրաշափառ»-ով հանդիսավորապես դեպի լուսազարդ խորանը կառաջնորդվի զգեստավորյալ և զարդարյալ գերաշնորհ պատարագող Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյան: Եկեղեցվույս երգեցիկ խումբը, որ այդ օր կրկնապատկված էր իր թիվով, մեղմ ու խորհրդավոր կսկսի երգել «Խորհուրդ խորին»:

Հավարտ ս. պատարագին, այդ օրվան առթիվ մատաղի օրհնությունը չսկսած, ինքնաբուխ ազդումով հովվական գավազանին կոթնած գերաշնորհ սրբազանը կսկսի իր քարոզը: Հոգեթով և ներշնչված խոսեցավ Սուրբ Խաչի խորհուրդին մասին, շնչոտելով դարե ի դար անոր անփոփոխելի գորությունը, միակ աղբյուրը մեր հավատքին և կյանքին: Սրբազանը խոսեցավ հայ ժողովուրդի պատմության՝ անոր բազմաշարժար գողգոթաներում և հրաշափառ

հարության մասին, գոհությամբ և օրհնությամբ հիշեց անցյալի այն անանուն երախտավորները, որոնք իրենց հանգստավետ կյանքի փոխարեն նախընտրած էին եկեղեցին շինել և նվիրել ազգին, մխիթարական և խրախուսիչ խոսքերով գովեց և օրհնեց Պուրկազի եկեղեցասեր և հայրենասեր համայնքը, հորդորելով ամենուս, որ կյանքի դժվար պահերում չմոռանաք հավատքով ըսել. «Սուրբ Խաչ, օգնեա՛ ինձ»: Օրհնեց մատաղը, որ լիառատ բաշխվեցավ զայն առատաձեռն եկեղեցիին նվիրողներուն: Մատաղը առնելն առաջ մոտենալով սուրբ խորանին, մեր աչքերը հանկարծ կսկեռին գրականին վրա բացված մեծ շարականի օրվան նշանակությունը պանծացնող սա տողերում. «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի»: Եվ մեր երախտագիտական զգացումները, լուսեղեն երամի մը պես կհետևին մեր գերաշնորհ առաջնորդին, որ ժողովուրդը օրհնելով կուղղվի դեպի վերձատուն, հոն՝ իրեն դիմողները մխիթարելու:

ՎԱՆԱՏՈՒՐ

ՊՈՒՐԿԱԶԻ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Նեղ պատերով, տանիքով ցած,
Բայց անոր մէջ կ'ապրի Աստուած
Հեռու հողէն մեր հայրենի.
Մասունք մ'է Սուրբ Էջմիածնի:
Ան իղձերուն մեր ուխտավայր,
Մերթ Օշական, մերթ Աւարայր:
Նորեկ լոյսի կերոն այնտեղ
Եւ Ծնորհալին՝ սիրոյ կանթեղ:
Իսկ մենք Խաչին հաւատընկալ,
Կ'երգենք հայուն Արևազալ:

ՎԱՐՈՅ ԾՈՊՈՅԵԱՆ